ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 07/2026/Վ/Վ

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 27 ապրիլի 2026 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի ապրիլի 18-ին Հանձնաժողով մուտքագրված քաղաքացի Սեմյոն Բաբայանի դիմումը (այսուհետ՝ Դիմում 1), 2026 թվականի ապրիլի 21-ին Հանձնաժողով մուտքագրված՝ քաղաքացի Ավետիք Չալաբյանի դիմումը (այսուհետ՝ Դիմում 2) և 2026 թվականի ապրիլի 22-ին Հանձնաժողով մուտքագրված՝ քաղաքացի Ցոլակ Ակոպյանի դիմումը (այսուհետ՝ Դիմում 3),

ՊԱՐԶԵՑ

1.Ըստ դիմումներով ներկայացված տեղեկատվության՝

1.1 Դիմում 1-ով ներկայացվել է 2026 թվականի ապրիլի 17-ին Ազգային ժողովի նիստին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցրած

արտահայտությունների համատեքստում դիմողի հետևյալ պնդումներին իրավական գնահատական տալու պահանջ՝

Ըստ դիմողի՝ ընտրողներին «շուն ու շանգյալ» անվանելը ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանվող մարդու արժանապատվության ուղղակի ոտնահարում է և բարձրաստիճան պաշտոնյայի կողմից նման բառապաշարի օգտագործումը հասարակության մեջ սերմանում է թշնամանք և անհանդուրժողականություն: Դիմողը նշել է, որ նմանատիպ պիտակավորումը հոգեբանական ճնշում է քաղաքացիների վրա՝ սահմանափակելով նրանց ազատ կամարտահայտումն Ազգային ժողովի՝ 2026թ. հունիսի 7-ի հերթական ընտրություններից առաջ: Ըստ դիմողի՝ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի կողմից թիրախավորվել են կոնկրետ քաղաքական հայացքներ ունեցող խմբերը (ԲՀԿ, ԼՀԿ, Ուժեղ Հայաստան): Դիմում 1-ի համաձայն՝ Ազգային ժողովի ամբիոնի օգտագործումը սեփական ժողովրդին նվաստացնելու համար հակասում է պետական պաշտոնյայի էթիկայի կանոններին, նման հայտարարությունները խորացնում են «սևերի և սպիտակների» բաժանումը հասարակության մեջ: Դիմում 1-ով նաև նշվել է, որ խախտվել է քաղաքացիների՝ վիրավորանքից և հոգեբանական բռնությունից զերծ մնալու իրավունքը և քաղաքացուն կենդանու հետ համեմատելը մարդու իրավունքների միջազգային նորմերի կոպտագույն խախտում է, իսկ նախընտրական փուլում նման հռետորաբանությունը խաթարում է հավասար մրցակցային պայմանները: Դիմում 1-ի համաձայն՝ բարձրագույն իշխանությունը պարտավոր է հարգանքով վերաբերվել անգամ իրեն չընտրող քաղաքացուն և վարչապետի խոսքը վնասում է Հայաստանի՝ որպես ժողովրդավարական երկրի միջազգային հեղինակությանը:

1.2 Դիմում 1-ով ներկայացվել է «YouTube» սոցիալական կայքի «Irakanum.am» ալիքով 2026 թվականի ապրիլի 17-ին հրապարակված՝ «Փաշինյանն ԱԺ-ում կորցրեց ինքնատիրապետումը և գոռաց» վերտառությամբ տեսանյութի հղումը[1]:

1.3 Դիմում 2-ով վկայակոչվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի 4-րդ, 5-րդ, 25-րդ, 27.1-ին և 28-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2024 թվականի

[1] Հասանելի՝ https://www.youtube.com/watch?v=FICiapHQjdU

փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) 36-37-րդ, 61-64-րդ կետերը և նշվել է, որ 2026 թվականի ապրիլի 17-ին, հանդես գալով Ազգային ժողովում, ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը, դիմելով ընդդիմադիր քաղաքական ուժերին, վերջիններիս անվանել է «շուն ու շանգյալ», ապա հավելել է, որ եթե «Ուժեղ ՀՀԿ-ն» («Ուժեղ Հայաստանը»), «Հայաստան» դաշինքը, ԲՀԿ-ն անցնեն խորհրդարան, նշանակում ա, որ ես իմ մտքով անցկացնեմ, որ Հայաստանի Հանրապետությունում էդքան շուն ու շանգյալ կա, որ կարա իրանց օգտին քվեարկի: Դիմողը նշել է, որ նման անթույլատրելի արտահայտություններով, խախտելով զսպվածության ու քաղաքական անաչառության սկզբունքները, Նիկոլ Փաշինյանը վիրավորել է թե վկայակոչված քաղաքական ուժերին, թե վերջիններիս նախկինում ձայն տված կամ վերջիններիս օգտին քվեարկել պատրաստվող բազմաթիվ ընտրողներին, ինչը ակնհայտորեն դուրս է կարծիքի արտահայտման սահմանադրական իրավունքի շրջանակներից և կոպտորեն խախտում է Կանոնագիրքն ու «Հանրային ծառայության մասին» օրենքը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածը, դրա 2-րդ կետով սահմանված՝ քաղաքական խոսքի սահմանափակման ծավալը:

1.4 Դիմում 2-ով նշվել է, որ նման արտահայտություններով վիրավորանք է հասցվել ընտրողների, ընտրողների խմբերի, ինչպես նաև մի շարք քաղաքական ուժերի, այսինքն՝ պայմանավորված քաղաքական նախընտրությամբ՝ անձինք վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի կողմից ենթարկվել են վիրավորանքի և խտրական մոտեցման՝ ի հակադրումն գործող նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների:

1.5 Դիմում 2-ով ներկայացվել են վարքագծի կանոնների խախտման վարույթ հարուցելու և Ն.Փաշինյանի հրապարակային խոսքում վարքագծի կանոնների խախտման առկայությունն արձանագրելու պահանջներ:

1.6 Դիմում 3-ը բովանդակությամբ ամբողջովին նույնական է Դիմում 2-ին:

2. Հրապարակված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում վեր հանված փաստական տվյալները և վարույթի հարուցման իրավական հիմքերը.

2.1 Հանրապետության նախագահի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ ՆՀ-200-Ա հրամանագրով Նիկոլ Փաշինյանը նշանակվել է ՀՀ վարչապետ և պաշտոնավարում է մինչ օրս:

2.2 Ազգային ժողովի ութերորդ գումարման 11-րդ նստաշրջանի՝ 2026 թվականի ապրիլի 16-ի հերթական նիստի տեսաձայնագրության[2] ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի՝ 2025 թվականի կատարման ընթացքի վերաբերյալ զեկույցի քննարկման ընթացքում ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը հանդես է եկել հետևյալ եզրափակիչ ելույթով.

«Երրորդ օրն է արդեն, մենք քննարկում ենք Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին 2025 թվականի զեկույցը և քննարկման արդյունքներում քննարկումը ծավալվեց, ծավալվեց, ծավալվեց, ծավալվեց և եկավ, դարձավ էն, ինչը կոչվում ա նախկին-ներկա բանավեճ: Սա տեղի ունեցավ, ընդ որում՝ տեղի ունեցավ չնախատեսված հանգամանքների բերումով: Ես ճիշտն ասած՝ էսքան, տենց տեսարան առաջին անգամ էր, գուցե նախկինում չեմ նկատել, շատ պատահական հանգամանքների բերումով տեղի ունեցավ, որովհետև դե զեկույց ա, ներկայացնում ես, մեկ էլ տեսնում ես էն դռնից ինչ-որ մարդիկ են մտնում՝ սենց արած, գալիս, սենց ինչ-որ գործողություն են անում, սենց արած՝ նորից դուրս են գալիս, ասում եմ՝ էս ի՞նչ հաշիվ ա, ժողովուրդ, էս ի՞նչ հոսք ա, մարդանց էս ի՞նչ հոսք ա, չեմ տեսել տենց բան, ես վեց տարի պատգամավոր եմ եղել, ութ տարի վարչապետ,

[2] Հասանելի՝ https://www.youtube.com/watch?v=WCXN6_I-ZmM

եկել եմ էսքան, գոնե չեմ նկատել, գուցե եղել ա էլի, չեմ նկատել, բայց որ սենց ինչ-որ, սենց հոսքեր լինի, ասեցին՝ մարդիկ գալիս են գրանցվեն, որ աշխատավարձ ստանան: Էս մարդիկ մեզ ութ տարի ա «ՀՀի են շարում», թե ինչ-որ բաներ, պարգևավճարներ, չգիտեմ ինչ, չգիտեմ ինչ, գալիս են թաքուն գրանցվում, գնում, որ ենթադրենք, մի քանի կոպեկ ավել ստանան, և արդյունքում ես դա ֆիքսեցի, հրապարակեցի, իրենք ստիպված էին հետո գալ և մասնակցել ելույթների փուլին, և ելույթների փուլին մասնակցելով՝ մենք էլի եկանք, հանգեցինք նախկին-ներկա բանավեճին, և դա փաստ ա, չնայած ես ինքս էս ամբիոնից նախկինում բազմիցս ասել եմ, որ ժողովուրդ, պետք ա էդ բանավեճից դուրս գալ, բայց էս բանավեճն ուրիշ մի հատ շերտ բացահայտեց գոնե ինձ համար, որը ես մինչև էս էդ դիտանկյունից չէի նայել, չէի նկատել, որովհետև էդքան որ ասում ենք պատերազմի եռագլուխ կուսակցություն, պատերազմի եռագլուխ կուսակցություն, բայց էս քննարկումը նաև ակնհայտ դարձրեց և նրբություններ բացահայտեց, որ էդ պատերազմի եռագլուխ կուսակցությունն իրականում ճշգրիտ նույնն ա նախկինների եռագլուխ կուսակցությանը, որովհետև էն, ինչ մենք այսօր անվանում ենք պատերազմի եռագլուխ կուսակցություն, որը հայտ ա ներկայացնում 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին, դա ճշգրիտ Ռոբերտ Քոչարյանի իշխանության տարիների կոալիցիան ա: Էդ կոալիցիայի մեջ էր ԲՀԿ-ն, էդ կոալիցիայի մեջ էր Դաշնակցությունը, էդ կոալիցիայի մեջ էր Հանրապետականը:

Դե հիմա Դաշնակցությունը և Հանրապետականը, ԲՀԿ-ն պարզ ա, բայց Հանրապետականն արդեն, ինչպես հիշում եք, նախորդ խորհրդարանական ընտրություններից տակտիկան փոխել ա: Նախորդ խորհրդարանական ընտրություններում իրենք «ՊՈՒ» էին, հիմա էլ դարձել են «Ուժեղ Հայաստան»: Ընդ որում, էս հանգամանքը, որ «Ուժեղ Հայաստանը» նույն բանն ա, «Հանրապետական» կուսակցությունն ա, ու էն, որ Սերժ Սարգսյանը և մյուսները հայտարարեցին բացահայտ իրանց աջակցելու մասին, բայց կարծում եմ էդ պատկերն ամբողջացրեց բանը, քայլերթի շտուրմանը, որը կանգնած էր, ասենք, ջիպի ստոյկային կանգնած, քայլերթի շտուրմանը, որը, որը մենք մոռացել ենք, ախր ինքը «Հանրապետական» խմբակցության ղեկավար ա եղել և Սերժ Սարգսյանի աշխատակազմի ղեկավար ա եղել: Հիմա էլի եմ ասում՝ երեքի ցուցակը, որ նայես, «Ուժեղ Հայաստան», «Հայաստան»

դաշինք, Դաշնակցություն և ԲՀԿ, ճշգրիտ կալոդը խառնած ա, պոկերի տրամաբանությամբ ու բաժանած ա իրար մեջ, ով որտեղ կընկնի: Ու հիմա էնտեղ նենց կոմբինացիաներ են, որ դժվար ա նույնիսկ բան անել, պատկերացնել: Էն մեկը էնտեղ էր, ստեղից, էն մեկը էնտեղ էր, հետո էնտեղ գնաց, հետո գնաց էնտեղ, հետո էնտեղ, հետո էնտեղ: Այսինքն մենք պետք ա արձանագրենք, որ 2027, 2026 թվականի խորհրդարանական ընտրությունները, որ ասում են վերջին շանսն ա, վերջին շանսն ա, դա Քոչարյան-Սարգսյան իշխանության տարիների կոալիցիայի վերջին շանսն ա: Բայց ես ուզում եմ ասել նաև, որ էսպիսով ավելի ա ընդգծվում, ժողովուրդ ջան, էս նախկին-ներկա բանավեճը հաղթահարելու, կամ ավելի ճիշտ՝ վիճաբանությունը հաղթահարելու անհրաժեշտությունը:

Ու սա շատ կարևոր ա: Ու հիմա ակնհայտ ա, որ դա հաղթահարելու մի ձև կա միայն, միայն մի տարբերակ կա այդ բանավեճը հաղթահարելու: Դրա համար պետք ա 2026 թվի խորհրդարանական ընտրություններում «Ուժեղ Հայաստանը», «Հայաստան» դաշինքը և ԲՀԿ-ն անցողիկ շեմը չհաղթահարեն, և սա, ուղղակի, այսինքն՝ չհաղթահարեն, չհավաքեն էնքան ձայներ, որ անցնեն խորհրդարան: Ու դա ամեն օրվա հետ ավելի իրատեսական քաղաքական խնդիր ա դառնում, ու էդ իրատեսականությունն էս ամբիոնից ուղղակի ճառագեց: Ինչի՞, որովհետև նախ էն քաղաքական ուժերը, որոնք հանդես են գալիս՝ ժողովրդին անվանելով ժեխ, շուն ու շանգյալ, բոշա: Այսինքն՝ տեղ իրանք ի՞նչ են, մարտահրավեր են նետում, որ իրանց ձայն տվող մարդը պիտի ինքն իրան հայտարարագրի՝ որպես ժեխ, շուն ու շանգյալ ու բոշա: Սա իրենց մարտահրավերն ա: Եվ Հայաստանի քաղաքացին պետք ա որոշի, էդ մարտահրավերն ընդունո՞ւմ ա, թե՝ չէ:

Մի հոգի կա, 63 երկրի քաղաքացի ա, ասում ա՝ ես վստահ եմ, որ ես դառնալու եմ բան, վարչապետ: Ուրեմն, հլը տեսեք, երկու հանգամանք եմ ասում. ինքը ոչ ընտրություններին մասնակցում ա, ոչ վարչապետի թեկնածու ա, ոչ պատգամավորի թեկնածու ա, բայց ինքը վստահ ա, որ հաղթելու ա: Բա նրանք, ովքեր որ մասնակցում են, այսինքն՝ դե յուրե համ պատգամավոր են, համ մասնակցում են, համ պատգամավորի թեկնածու են, համ վարչապետի, բա նրանք ի՞նչ ասեն: Այստեղ ուրիշ խնդիր կա: Մի անգամ էդքան ասելուց հետո հղում չեն անում ժողովրդին, ասում են՝

մենք վստահ ենք, որ հաղթելու ենք, բայց մի հատ նախադասություն չկա, որ մենք վստահ ենք, որ մեր ժողովուրդը գալու ա, մեզ ընտրի: Էդ եմ ասում: Ինչ-որ տեղեր ասել են, ղրկել են, ասել են գնա, ու էդ երիտասարդն ուղղակի խաբար չի, հիմա ինքը, ասում եմ նեղանում են, ամեն օրվա հետ դառնում ա ավելի ու ավելի բոմժ, ավելի ու ավելի բոմժ ու էստեղ մենք ոչ մի մեղք չունենք, ու էս պրոցեսը շարունակվելու ա:

Ու հաջորդ գործոնը, որ էս ուժերը չհաղթահարեն անցողիկ շեմը. իրանք գալիս են այս ամբիոնից բաներ են խոսում՝ մեր վրա հղում անելով, բայց ժողովուրդը, ուրիշ բան՝ դոնփակ նիստ լիներ: Իրանք եկել են էս ամբիոնից խոսում են, որ մենք թոշակը չենք բարձրացրել: Քանի հոգի վրա-վրա ասում են՝ չէ, ի՞նչ թոշակ ա բարձրացել, թոշակը չի բարձրացել: Հայաստանի Հանրապետության, քանի՞, 600 հազար, թե 4… 660 հազար քաղաքացի արդեն էդ բարձրացրած թոշակը ստացել ա, իրանք էս ամբիոնից գալիս խոսում են: Ո՞նց կարող ա սենց քաղաքական ուժն ընդհանրապես ձայն ստանա: Իրենք գալիս են էս ամբիոնից խոսում են, որ ըստ էության, Առողջության ապահովագրության համակարգը, չնայած մենք հայտարարել ենք, որ ներդրված ա, դա ձախողված համակարգ ա: Երեկ այստեղ բաներ էին խոսում, ուզում էի հասկանայի՝ էս մարդիկ ինչի՞ մասին են խոսում, ինչի՞ մասին են խոսում: Այսինքն՝ գալ, ժողովրդին ասել շուն ու շանգյալ, ժեխ, բոշա, հետո սկսել ասել, ապացուցել ակնհայտ բաներ ու հետո գնալ հաղթահարել շեմը, կներեք, իմ քաղաքական զգացողությունը թույլ ա տալիս, որ ես պնդեմ, որ եթե մենք էս պատկերը առավել բացված ներկայացնենք, մենք իրոք հաղթահարելու ենք էս նախկին-ներկա բանավեճը:

Փաստորեն, ես հասկացա, որ մենք 300 դպրոց չենք կառուցում, ես հասկացա, որ մենք դպրոց ընդհանրապես չենք կառուցում, հա, որ մենք դպրոց փակում ենք: Բա էդ, գիտեք ինչ, էդտեղ շատ կարևոր, շատ կարևոր մի հանգամանք կա: Իրանք վերջին անգամ էդ դպրոցները, որ ասում են՝ մենք փակում ենք, ե՞րբ են եղել էդ դպրոցներում, էդ «դպրոցներում», էդ այդ այսպես կոչված դպրոցներում: Բայց էդ դպրոցները, այսպես կոչված դպրոցներն իրանց պետք ա, որովհետև իրանց պետք ա, որ մեր երեխեքը էդ դպրոցներում անցկացնեն 10 տարի, որ էդպես էլ կրթություն չստանան, որ արդյունքում շալվար ունենալու հնարավորությունից նույնիսկ զուրկ լինեն, որ արդյունքում էդ երեխաների շալվար ունենալու հույսն իրանց վրա լինի՝ ընտրակաշառք բաժանողների,

էն ընտրակաշառքի բանը, որ վերջում էլ, վերջում էլ, մի հատ ասենք, ենթադրենք, բանի էն, одноразовый շալվար շպրտեն էդ երեխեքի երեսին, հետևներից էլ ասեն՝ արա այ բոշեք, այ լնգուլավազներ:

Էս, էս էսպես կոչված ավերակներն իրենց պետք են, որովհետև էդ դպրոցից դուրս եկածը հիմնականում սևագործ բանվոր կարա ըլնի, որ իրանց բրիգադներում, կալուգաներում և տարբեր տեղերում, ավտոների, վագոնների տակ քնելով, ամիսներով չլողանալով, բա էդ երեխեքը գիտե՞ք՝ ինչի են սպարտիվկով, որովհետև դուք իրանց տարել եք աշխատեցնելու և հետ եք ուղարկել էդ սպարտիվկով, որ իրանք գնան օտար երկրներում ձեզ ծառայեն, մի բառ ռուսերեն դաժե չիմանան, որ ձեր կառուցած ստրկությունից ազատվելու հնարավորություն չունենան, որ դաժե առանց ձեր թույլտվության ոչ կարենան շնչել, ոչ արտաշնչել, որ վերջում էլ էդ երեխեքին ասեք՝ այ ի՞նչ, բան, շուն ու շանգյալ և ժեղ: Բա իհարկե պետք են:

Բա հլը եկեք գնանք մեր կառուցած դպրոցը, էդ մեր կառուցած դպրոցներից դուրս եկած երեխեքը ձեզ դաս կտան, դուք ընդհանրապես շանս չունեք էն հասարակության մեջ, որը ձևավորվել ա: Բա մանկապարտեզները, սերունդը ցեխերի մեջ ա մեծացել, ցեխերի մեջ՝ բառիս բուն իմաստով, բա դուք պիտի ցեխերի մեջ երեխեքին պահեք ու մեծացնեք, որ վերջում հնարավորություն ունենաք, ասեք՝ շուն ու շանգյալ, որովհետև էն երեխեքը, որը էսօրվա մեր կառուցած մանկապարտեզ են մտնում և էսօրվա մեր կառուցած դպրոցն են մտնում, էդ դպրոցից դուրս եկող երեխեքի հանրությունում դուք շանս չունեք, դուք բացի շուն ու շանգյալից ուրիշ որևէ կարգավիճակ չեք կարա ունենաք: Չեք կարա ունենաք: Դուք ընդհանրապես ո՞վ եք, դուք ընդհանրապես ո՞վ եք, ես էդ պատերազմի եռագլուխ, քառագլուխ կուսակցություններին եմ ասում, պլյուս սրբապիղծ կտրիճներին, դուք ընդհանրապես ո՞վ եք, ի՞նչ եք ձեզնից ներկայացնում: Դուք շանս ունեք էն հասարակության մեջ, որտեղ կարողանում եք երեխեքին ցեխերի մեջ պահեք, էն հասարակության մեջ, որտեղ երեխեքը շալվար չունեն և շալվար ունենալու շանս չունեն: Էս ա ձեր կառուցած և ձեր երազած հանրությունը:

Մի հատ էլ, պարոն Օհանյան, եկել եք, էս ամբիոնից ասում, բան եք, հանրությանը կոչ եք անում: Հազար ներողություն, Ձեր կոչը ո՞ւմ ա հետաքրքիր ընդհանրապես: Ձեր կոչը որևէ մեկին որ հետաքրքիր լիներ, Ձեր, գոնե Ձեր քաղաքական ուժն իրա

ցուցակում որևէ ձևով կներառեր: Ես խնդրում եմ անընդհատ կոչ արեք հանրությանը, անընդհատ, այ ինչքան շատ կոչ անեք, էնքան ավելի ձեր քաղաքական ուժի խորհրդարան չանցնելու շանսերը մեծանալու ա: Էդ պոդկաստը, որ բան են անում, ընդհանրապես էդ նվեր էա, ո՞նց անենք՝ մի քիչ շատ անեն, ո՞նց անենք՝ մի քիչ շատ անեն, որովհետև ինչքան շատ անեն, էնքան իրանց խորհրդարանում հայտնվելու շանսը փոքրանալու ա:

Հիմա էլ եկել են, ասում են՝ խաղաղություն: Նախ՝ էս մարդիկ էլի ի՞նչ ապացուցեցին: Իրենք եկան, ասացին, որ էն խաղաղությունը, որը հաստատված ա, դա Հայաստանին ձեռնտու չի, դա Հայաստանի շահերից չի բխում, իրանք ասում են՝ դե մենք դեմ չենք խաղաղությանը, բայց իրենք ուզում են, իրանք ասում են՝ այ խաղաղությունը մեր ժամանակ էր...

Եկեք նայենք՝ ինչ խաղաղություն ա եղել իրենց ժամանակ: 98 թվական՝ 24 զոհ Հայաստան-Ադրբեջան փոխհրաձգության հետևանքով, 99 թվական՝ 12 զոհ փոխհրաձգության հետևանքով, 2000 թվական՝ 12 զոհ փոխհրաձգության հետևանքով, 2001 թվական՝ 3 զոհ սահմանին, 2002 թվական՝ 7 զոհ, 2003 թվական՝ 11 զոհ, 2004 թվական՝ 8 զոհ, 2005 թվական՝ 14 զոհ, 2006 թվական՝ 7 զոհ, 2007 թվական՝ 7 զոհ, 2008 թվական՝ 5 զոհ, 2009 թվական՝ 6 զոհ, 2010 թվական՝ 11 զոհ, 2011 թվական՝ 10 զոհ, 2012 թվական՝ 13 զոհ, 2013 թվական՝ 6 զոհ, 2014 թվական՝ 26 զոհ, 2015 թվական՝ 38 զոհ, 2016 թվական՝ 22 զոհ, 2017 թվական՝ 22 զոհ:

Էս ա իրանց ուզած խաղաղությունը: Հիմա... (դահլիճից արձագանքում են, արձագանքը հստակ չի լսվում) Չէ, չէ, մի րոպե, 20 թվականի մասին էնքան ասվել ա, և մենք երբեք դա չենք... Էդ դուք եք, որ 1000-ով, անընդհատ, 2000-ով, 3000-ով ուզում եք ավելացնեք: Եվ չի արձանագրվում մի բան, որ ի վերջո... Ասում են՝ ինչի ես ասել. «Արցախը Հայաստան է և վերջ»: Ես մեր կուսակցության համաժողովում մի անգամ էդ թեմային անդրադարձել եմ, բայց կա նաև մի իրողություն, հարգելի գործընկերներ, 94 թվականից, 95 թվականից փաստացի Հայաստանի Հանրապետությունը՝ որպես պետություն, նույն կետի վրա կանգնած ա եղել 25 տարի: Նույն կետի վրա կանգնած ա եղել 25 տարի: Ու էդ կետը եղել ա փակուղային կետ: Եվ հիմա էլ, հիմա էլ մի նոր բան, էս մարդիկ էդպես էլ բան չարեցին: Մի հատ եկան քննիչ հանձնաժողով, չգիտեմ, էս

կբացահայտենք, Ղարաբաղի հարցի բանակցային թղթերը… Հրապարակեցինք Ղարաբաղի հարցի… Հիմա էլ ընկել են, բանը, քննիչ հանձնաժողովի զեկույցը: Ասենք, ձեզ պարզ չի՞, էս ա էդ էլ ա ինչ-որ ձևով պիտի հրապարակվի: Ասենք, էդ փոցխին անընդհատ ինչի՞ եք կանգնում:

Այո, մենք էդ մարտահրավերի հետ առերեսվել ենք: Բա 30 տարի, անկախության 30 տարի ամբողջ պետական համակարգը աշխատել ա էն տրամաբանությամբ, որ Արցախը Հայաստան ա: Լուծված ա էդ հարցը, խնդիր չկա, ամեն ինչ նորմալ ա: Եկել ենք, առերեսվել ենք էդ իրողության հետ, մի հատ հասկանանք՝ ի՞նչ ա կատարվում: Ու սկսել ենք հարցեր տալ ու սկսել ենք գնալ էդ հարցերի հետևից ու սկսել ենք գտնել էդ հարցերի պատասխանները: Ու էդ հարցերի պատասխանների հետևից ա, որ հասկացել ենք, որ մենք թակարդի մեջ ենք, որ պետք ա էդ թակարդից դուրս գալ, որովհետև եթե էդ թակարդից դուրս չգանք, մենք պետությունը կորցնելու ենք:

Եվ դա, այո՛, ես ուզում եմ ասել, հարգելի գործընկերներ, և դա պետք ա ասել, որ մենք շատ արդյունավետ իշխանություն ենք, որովհետև մենք մեր երկիրը դուրս ենք բերել թակարդից: Էն թակարդից, որի մեջ մտել ենք Ղարաբաղի շարժումով և որի մեջ պատերազմի եռագլուխ կուսակցությունները և նրանց սատելիտները մեզ անընդհատ մտցրել են ու պահել են փակուղում, ու ամեն ինչը, ամեն ինչը բացարձակապես բացատրել են դրանով: Եվ մենք մեր երկիրը դուրս ենք բերել փակուղուց: Սրա համար խիզախություն ա պետք, սրա համար խիզախություն ա պետք, և մենք էդ խիզախությունը ցուցաբերել ենք: Պարոն Խաչատրյանն ասում ա՝ «պատերազմն ավարտվում ա, երբ պատերազմի պատճառը հանգուցալուծվում ա…» կամ չգիտեմ ինչ, տենց մի բառ ա օգտագործում: Բա էդ ենք ասում՝ պատերազմի պատճառը եղել ա Ղարաբաղյան շարժումը: Ղարաբաղյան շարժումը չկա, ուրեմն պատերազմ չկա: Էս ա ամբողջ խնդիրը: Եվ մենք, այո, գիտակցված գնացել ենք էդ ճանապարհով:

Հիմա էլ գիծ են տանում իմ պրոթուրքականության և իմ պրոադրբեջանականության մասին, որովհետև էս մարդիկ ասում են, տեսեք՝ ինչ են ասում, ասում են՝ մենք դեմ չենք խաղաղությանը: Իրենք երբեք դեմ չեն եղել խաղաղությանը, բայց իրանք խաղաղությունը միշտ քննարկել են տարածաշրջանից հազարավոր կիլոմետրեր հեռու: Հասկանու՞մ եք, տարածաշրջանից հազարավոր

կիլոմետր՝ Մոսկվայում, Բրյուսելում, այլ տեղերում, Քի Վեսթում և այլն: Մենք միշտ, մենք միշտ, էլի եմ ասում, խաղաղության մասին մեր պատկերացումն էն ա, որ մենք Ավստրալիայի հետ ունենք հարատև և հուսալի խաղաղություն: Իսկ խաղաղությունն էն ա, որ դու ունես քո տարածաշրջանում: Ո՞նց եք պատկերացնում խաղաղություն՝ այն փնտրելով տարածաշրջանից դուրս: Դա պատերազմ ա, դա ինքնին պատերազմ ա: Մենք ունեցել ենք էդ համարձակությունը՝ գնանք և խոսանք: Մենք ունեցել ենք համարձակությունը՝ խոսենք…

Ուրիշ բան էլ են ասում: Ասում են՝ քանի որ… Գրել էի… Ասում ա՝ էդ նշանակում ա, որ դու, Փաշինյանն, ասում ա, ունի պայմանավորվածություններ: Հա, պարզ չի՞, որ ունենք պայմանավորվածություններ: Էդ պայմանավորվածությունները ստորագրված, նախաստորագրված, մի մասն էլ վավերացված ա էդ պայմանավորվածությունների: Բա հենց էդ ա, որ դուք, ձեր ամբողջ քաղաքականություն էդ պայմանավորվածությունների դեմ ա, որը խաղաղության և կայունության անկյունաքարն ա, հիմքն ա: Էդ հիմքը, որ տակից քաշվեց, խաղաղությունն ու կայունությունը փլուզվելու ա: Ըտեղ սպառնալիք չկա, ոչ մի սպառնալու բան չկա: Դա շատ պարզ, շատ սովորական տրամաբանություն ա:

Եվ այո՛, էս ընտրություններում ժողովուրդը պետք ա տեր կանգնի խաղաղությանը նաև էդ տրամաբանությամբ, որ ակնհայտ լինի, որ Հայաստանի Հանրապետության ժողովուրդը էս քաղաքականությունը պաշտպանում ա, տեր ա կանգնում էս քաղաքականությանը: Ընդ որում, ասում եմ՝ երբեք չեմ ունեցել և չունեմ էն հրապարակային հայտարարված և գրավորից դուրս որևէ պայմանավորվածություն: Այո՛, հենց առանցքը և նրբությունը դա ա՝ բոլոր պայմանավորվածությունները ձեռք բերված են և հրապարակված են էդ պայմանավորվածությունները: Դուք եկեք պայմանավորվածությունների բովանդակությունից խոսացեք: Չունեն ասելիք: Հա, էդ էլ բանն էր, դատի էին տալիս՝ խաղաղության համաձայնագրի բանը, տեքստը չեն տալիս ծանոթանանք: Գնում էին, մի քանի անգամ թողեցինք, գնացին, ծանոթացան: Գնում էին կարդում, գալիս, ուրիշ բաներ էին պատմում: Բա հիմա հրապարակային ա: Ո՞վ ա հիշում՝ ընդդիմությունը վերջին անգամ ե՞րբ ա այս ամբիոնից եկել, բռնել խաղաղության համաձայնագրի կամ չգիտեմ, հռչակագրի տեքստը, սկսել տող կարդալ

և բան անել: Ե՞րբ, եղե՞լ ա տենց բան ընդհանրապես (դահլիճից արձագանքում են՝ հրապարակումից առաջ): Չէ, չէ, հրապարակումից, բա հրապարակումից առաջ, երբ որ դա կոնֆիդենցիալ էր, ինչ ասես ասում էին, հենց հրապարակվեց, էդ թեման ամփոփվեց: Նույնն էլ բանակցային թղթերը, բա հիմա հրապարակված են: Ասում էիք ա, հիմա հլը հրապարակեք, մենք… Ե՞րբ եք տեսել, որ ընդդիմությունը կամ էս ամբիոնին, կամ հրապարակային կանգնի, ասի՝ թուղթ մեկ, հլը տեսեք էս ինչ ա գրած, հլը տեսեք էս ինչ ա գրած, հլը տեսեք էս ինչ ա գրած:

Ըստ էության, այս քննարկման արդյունքում արձանագրվեց երկու բան՝ առաջինը, որ խաղաղությունը վերանայելը պատերազմի եռագլուխ կուսակցության, որը ձևավորված է նախկին իշխանության ներկայացուցիչներից, հիմնական և առանցքային խնդիրն է: Հիմա էլ նոր խուճապ ա սկսել: Մի ժամանակ ասում էին, որ բանակը, չգիտեմ, բան, անպաշտպան ենք, սահմաններ… Հիմա մենք ասում ենք՝ լա՛վ, ասում ենք՝ լավ, ժողովրդին ցույց կտանք: Հիմա էլ սկսել են, բանի՝ ի՞նչ են ցույց տալու, չէ, ցույց չեն տալու, չէ, էդ որ ցույց են տալու, էդ էդ չի, ուրիշ բան են ցույց տալու: Ինչի՞ եք խառնվել իրար: Ինչի՞ եք նորերը ցույց տալիս, հները ցույց տվեք, չգիտեմ ինչը ցույց տվեք, էս ցույց տվեք: Ցույց ենք տալիս, որ ի վերջո տեսանելի կերպով պատասխանենք ձեր՝ պետական պարտքի հետ կապված բոլոր թյուր պնդումներին: Դրա համար ենք ցույց տալիս: Եվ ցույց ենք տալիս նաև նրա համար, որ դա էլ մի գործոն դառնա, որ դուք՝ «Հայաստան» դաշինքը, ուժեղ ՀՀԿ-ն և ԲՀԿ-ն չանցնեն խորհրդարան, որ չհավաքեն անհրաժեշտ թվով ձայներ խորհրդարանական կուսակցություն դառնալու համար, որովհետև չի կարա էդքան լկտի ձևով, հիբրիդային դեզինֆորմացիայի միջոցով ժողովրդին ապատեղեկատվության հորձանուտի մեջ գցել փորձող քաղաքական ուժը էլի հայտնվի խորհրդարանում: Դա շատ վատ բան կլինի: Ես չեմ կարա հավատամ, կներեք, հազար ներողություն, եթե ես հիմա ասեմ՝ գիտեք ինչ, կարող ա «Ուժեղ Հայաստանը», «Հայաստան» դաշինքը, ուժեղ ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն անցնեն խորհրդարան, նշանակում ա՝ ես իմ մտքով անցկացնեմ, որ Հայաստանի Հանրապետությունում էդքան շուն ու շանգյալ կա, որ կարա իրանց օգտին քվեարկի: Ես ձեզ լուրջ եմ ասում, հարգելի գործընկերներ: Մենք մեր բանի, խոսույթում, եթե մեր հանրային խոսույթում լինի միտք, որ ուժեղ ՀՀԿ-ն, «Հայաստան» դաշինքը և ԲՀԿ-ն

կարան անցնեն խորհրդարան, դա անհարգալից վերաբերմունք ա Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ: Ում մտքով տենց բան անցնի, որ էդ 3 քաղաքական ուժը կարան անցնեն խորհրդարան, դա անհարգալից վերաբերմունք ա: Այո, բա ժողովուրդը որոշում ա… էդ եմ ասում, մի հատ, բանը, էդ, էդ, էդ 62 երկրի պասպորտ ունեցող անձը ասում ա՝ ես դառնալու եմ վարչապետ, ես դառնալու եմ վարչապետ, ես դառնալու եմ վարչապետ: Ասում են՝ մենք… Տեսե՞լ եք՝ մի օր ժողովրդի անուն տան: Տեսե՞լ եք՝ մի օր ժողովրդի անուն տան: Մի անգամ ժողովրդի անուն չեն տվել: Իսկ մենք տեսե՞լ եք՝ երբևէ մենք ասենք որևէ բան՝ առանց ժողովրդին հղում անելու: Մենք ասում ենք, որ, ժողովուրդ ջան, տեր կանգնիր խաղաղությանը և մեզ պետք չի պարզապես, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը չպետք ա պարզապես՝ խորհրդարանական մեծամասնություն ձևավորվի, պետք ա, որ սահմանադրական մեծամասնություն ձևավորի, որպեսզի խաղաղությանը տեր կանգնելու պրոցեսը գնա մինչև վերջ: Իսկ իրանք ասում են՝ մենք վստահ ենք, վստահ ենք, մենք էս ենք անելու, էն ենք անելու, էն ենք անելու, և խոսում են շուն ու շանգյալների և բոշաների մասին:

Եվ էս քաղաքական կոնտրաստն ա, որը պետք ա պայմանավորի առաջիկա քաղաքական դիսկուրսը: Ես կարծում եմ հետևյալը, որ առաջիկա, առաջիկա քաղաքական պրոցեսների իմաստը պետք ա լինի հետևյալը՝ ժողովուրդը պետք ա տեր կանգնի խաղաղությանը և ժողովուրդը պատերազմի եռագլուխ կուսակցության, նախկինների եռագլուխ կուսակցության շուն ու շանգյալներին և քաղաքական բոշաներին պետք ա ուղարկի հարատև քաղաքական… (դահիլիճից արձագանքում են, հստակ լսելի չեն) դուրս, հարատև քաղաքականությունից դուրս:

Հա, իմիջիայլոց ասեմ, որ երեկ ապօրինի գույքի բռնագանձման գործով, ես էսօր առավոտը կարդացի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը առաջին նախադեպային որոշումը կայացրել ա, և համոզված եմ՝ դրանով շատ ձեզ հայտնի շրջանակների բոմժ դառնալու պրոցեսը այլևս անշրջելի ա: Շնորհակալ եմ:»

2.3 2026 թվականի ապրիլի 16-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն հրապարակել է «Բացահայտվել են ընտրակաշառք տալու և ստանալու նոր դեպքեր. ձերբակալվել են

մեկ տասնյակից ավել անձինք» վերտառությամբ տեսանյութ[3], որի համաձայն՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամների և նրանց հետ համագործակցող հասարակական կազմակերպությունում որպես աշխատակից գրանցված մի խումբ անձանց կողմից Արարատի մարզի Արտաշատ համայնքի մի շարք ընտրողների ընտրակաշառք է բաժանվել:

Տեսանյութի 0:38 րոպեին ներկայացված է ենթադրյալ հանցանքը կատարած անձանց միջև հեռախոսային խոսակցության ձայնագրությունը, որում զրուցակիցներից մեկը նշում է. *«Մյուս շաբաթ տենանք հեսա ինչ ա ըլնում: Գևորը Հասոյի վրա ջղայնացավ, ասեց՝ ինչքան շուն-շանգյալ կա, բերել ես, գրանցել ես շտաբիդ վրա, 200 ես տալի, հարազատներին սաղին գցել ես գյուղերը, 100 ես տալի՞: Էն շուն-շանգյալներին կգցես գյուղերը 100-ով, իրանց էլ կգցես շտաբի վրա:»:*

Տեսանյութի 00:58 րոպեին ներկայացված է հեռախոսային խոսակցությունից մեկ այլ հատված, որում զրուցակիցներից մեկը նշում է. *«Չես հավատում՝ ուղեղս կախել ա արդեն: Երկու ռես եկել եմ Բանգլադեշ, հետ եմ եկել, բերիմ համ Անուշիկին շլվար առամ, համ էկամ Լուսոյին ու Քիսոյին տեսամ, բան կար տալու, տվիմ:»:* Մյուս զրուցակիցը հարցնում է՝ Լուսոն ու Քիսոն ո՞վքեր են:»: Առաջին զրուցակիցը նշում է. *«Էն երկուսն էլ, աղջիկները, որ միշտ գալի-էթում են առավոտ շուտ, էն բոշան:»:*

Տեսանյութի 1:23 րոպեին ներկայացված հեռախոսային խոսակցության ձայնագրությունում զրուցակիցներից մեկը նշում է. *«Ասիմ համ կանչում եք, համ էլ երեխեքի վրա գոռում եք, ասում եք՝ սպարտիվկեքով են: Փող չունեն, սպարտիվկեքով պիտի գան, փող չունեն: Ուզում եք մաքուր շորերով գան, հանեք, փող տվեք: Խաբա՞ր էիր, որ 20.000 փող էին վերցրել (մյուս զրուցակիցը հարցնում է՝ քսա՞ն): Էսօրվա իրանց հագի շլվարները, վաղը, որ պիտի հագնեն, Ալիկն ա առել:»:*

2.4 2026 թվականի ապրիլի 17-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր «Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյան» էջով կատարել է հետևյալ գրառումը՝

[3] Հասանելի՝ https://www.anticorruption.am/hy/post/batsahaytvel-en-ntrakashark-talu-yev-stanalu-nor-depker-dzerbakalvel-en-mek-tasnyakits-avel-andzink-1

«Պատերազմի եռագլուխ կուսակցության ուժերը, որ Հայաստանի քաղաքացուն «շուն ու շանգյալ» և «բոշա» են անվանում, չպետք է հաղթահարեն ԱԺ անցնելու անցողիկ շեմը»:

Գրառմամբ ներկայացված տեսանյութում ՀՀ վարչապետը նշում է հետևյալը.

«Վերջին երեք օրերի խորհրդարանական քննարկումները էականորեն թարմացրին ներքաղաքական և նախընտրական օրակարգը, և այդ թարմացումը կայանում է նրանում, որ պատերազմի, և որ նույնն է՝ նախկինների եռագլուխ կուսակցության ուժերը չպետք է հաղթահարեն խորհրդարան անցնելու անցողիկ շեմը:

Ինչու՞: Որովհետև ինչպես մեր քննչական մարմինների կատարած քննության արդյունքում պարզվեց և հրապարակվեց, այդ ուժերը իրենց կողմնակիցներին անվանում են, անվանարկում են ինչպես «շուն ու շանգյալ» և «բոշա», և հետևաբար առավել ևս այս պայմաններում ես չեմ կարող հավատալ, որ Հայաստանի Հանրապետությունում կան քաղաքացիներ, ովքեր պատրաստ են ընդունել այդ անվանարկումը՝ օգտագործված պատերազմի կամ նախկինների եռագլուխ կուսակցության կողմից և ձայն տալ այդ եռագլուխ կուսակցության ուժերից որևէ մեկին:

Ես չեմ կարող դրան հավատալ, որովհետև այդպես մտածելը կնշանակի անհարգալից վերաբերմունք Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ: Եվ ուրեմն, պատերազմի եռագլուխ կուսակցությունը և որ նույնն է՝ նախկինների եռագլուխ կուսակցության ուժերը չպետք է հաղթահարեն խորհրդարան անցնելու անցողիկ շեմը հենց Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հասցեին շուն ու շանգյալ և բոշա արտահայտությունները գործածելու համար: Եվ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պետք է քվեարկության իրենց վերաբերմունքն արտահայտեն և պատերազմի եռագլուխ կուսակցության ուժերին, և որ նույնն է՝ նախկինների եռագլուխ կուսակցության երեք ուժերին, խոսքը Ուժեղ ՀՀԿ Հայաստանի, ԲՀԿ-ի և «Հայաստան» դաշինքի մասին է, և նույնն է՝ Դաշնակցություն-Քոչարյան դաշինք, ահա այդ երեք ուժերին պետք է իրենց ընտրությամբ բրենդավորեն որպես «շուն ու շանգյալ» և դուրս շպրտեն Հայաստանի ներքաղաքական կյանքից: Պատերազմի և կամ նախկինների եռագլուխ կուսակցության ուժերը չպետք է հաղթահարեն խորհրդարան անցնելու անցողիկ շեմը առաջիկա խորհրդարանական

ընտրությունների արդյունքում: Ահա սա է թարմացված քաղաքական օրակարգը: Շնորհակալ եմ, սիրում եմ բոլորիդ:»:

2.5 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«3. Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:»:

2.6 Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Պետական քաղաքական պաշտոններն են (...) վարչապետի (...) պաշտոնները, (...) :»:

2.7 Օրենքի 25-րդ հոդվածով նախատեսվում է բարեկրթության և հարգալիրության սկզբունքը և սահմանվում է.

«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները դրսևորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են դրսևորում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս:»:

2.8 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(...)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները:

(...)»:

2.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարույթ կարող է հարուցվել՝

1) յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա, իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի դիմումի հիման վրա.

(...)

2. Հանձնաժողովը (...) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ: Սույն մասի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա:

(...)»:

2.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 30-րդ հոդվածի համաձայն.

«1. Դիմումը վերադարձնելու կամ վարույթի հարուցումը մերժելու մասին Հանձնաժողովն ընդունում է որոշում դիմումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

(...)

3. Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝

1) դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր.

(...)

4. Սույն հոդվածով նախատեսված որոշումները եռօրյա ժամկետում ուղարկվում են դիմողին:»:

2.11 Կանոնագրքի 1-ին կետի համաձայն.

1. (...) կանոնագիրքը վարքագծի կանոնների ամբողջություն է, որով պետք է առաջնորդվեն հանրային պաշտոն զբաղեցնող անձինք:»:

2.12 Կանոնագրքի 36-րդ կետի համաձայն.

«36. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հանդես գալիս՝ ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն:»:

2.13 Կանոնագրքի 37-րդ կետի համաձայն.

«37. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել վերադասի, անմիջական ղեկավարի (առկայության դեպքում), այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը:»:

2.14 Կանոնագրքի 61-64-րդ կետերի համաձայն.

«61. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների քաղաքական չեզոքություն և քաղաքական զսպվածություն դրսևորելու օրենսդրական պարտականությունը և չպահանջել նրանցից գործել դրա շրջանակներից դուրս:

62. Հանրային պաշտոն զբաղեցող անձը պարտավոր է ընտրությունների ժամանակ պահպանել նախընտրական քարոզչության, ներառյալ՝ քաղաքական գովազդին օրենքով ներկայացվող սահմանափակումները և պահանջները, ինչպես նաև՝ չօգտագործել հանրային ռեսուրսները, օրենքով նախատեսված վարչական ռեսուրսներն իր, այլ անձանց կամ քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզարշավի համար, չներգրավել այլ հանրային պաշտոն զբաղեցող անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների՝ օգտագործելու իրենց աշխատանքային ժամերը կամ այլ ռեսուրսները այդ նպատակի համար:

63. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր պաշտոնեական (ծառայողական) պարտականություններն իրականացնելիս չկատարել կուսակցական

շահը սպասարկելու համար հանրային ռեսուրսները տրամադրելու պահանջները, ինչպես նաև նման պահանջներ չներկայացնել հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների:

64. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քաղաքական զսպվածության պարտավորություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձը, այդ թվում՝ անկախ ու ինքնավար մարմիններում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը, ում անմիջական ղեկավարը կամ վերադասն ունի քաղաքական զսպվածության օրենսդրական պարտավորություն, պարտավոր է զերծ մնալ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց կամ սոցիալական մեդիայում ունեցած իր օգտահաշվից քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց:»:

Նկատի ունենալով, որ դիմումներով ներկայացված դեպքն առնչվում է Ն.Փաշինյանի խոսքի իրավաչափությանը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ սույն դեպքում կարծիքի արտահայտման ազատության սահմաններին:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: (...)

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ արտահայտման ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից և դրա զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է:

Արտահայտման ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարենպաստ կերպով են ընդունվում կամ դիտարկվում են որպես ոչ վիրավորական կամ արժանանում են անտարբերության, այլ նաև այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք վիրավորում, ապշեցնում կամ անհանգստացնում են: Այսպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն»:

Եվրոպական դատարանը նշել է, որ արտահայտման ազատությունը ենթակա է բացառությունների, որոնք, սակայն, պետք է խիստ կերպով մեկնաբանվեն և նման սահմանափակումների անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հաստատվի:[4]

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի ներքո քաղաքական խոսքի սահմանափակման հնարավորությունը հատկապես նեղ է:[5] Ազատ քաղաքական բանավեճի խթանումը ժողովրդավարական հասարակության կարևոր տարրերից է, և Եվրոպական դատարանը գտնում է, որ նման բանավեճի շրջանակներում արտահայտման ազատությունը բարձրագույն մակարդակի կարևորություն ունի:[6] Եվրոպական դատարանը նաև փաստել է, որ քաղաքական խոսքի կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ քաղաքական բանավեճի իրավաչափ սահմանափակումների շրջանակը նեղ է:[7] Քաղաքական խոսքի լայն սահմանափակումների կիրառումն, անկասկած, անդրադարձ կունենա տվյալ պետությունում արտահայտման ազատության նկատմամբ հարգանքի ընդհանուր մակարդակի վրա:[8] Միաժամանակ, քաղաքական բանավեճի ազատությունն իր բնույթով բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների կամ դրա շրջանակներում հնչեցված տեղեկատվության կամ գաղափարների համար կարող են սահմանվել պատասխանատվության միջոցներ:[9] Եվրոպական դատարանն ընդգծել է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող (կամ հանրային շահին առնչվող)

---

[4] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 42, Կարակսոնին և այլոք ընդդեմ Հունգարիայի (ՄՊ) (Karácsony and Others v. Hungary[GC]) գործով 2016 թվականի մայիսի 5-ի վճիռը, դիմումներ nos. 42461/13, 44357/13, §132, Ինկալն ընդդեմ Թուրքիայի (ՄՊ) (Incal v. Turkey[GC]) գործով 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, դիմում no. 22678/93, § 46

[5] Տես, օրինակ, ՆԻՏ Ս.Ռ.Լ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (ՄՊ) (NIT S.R.L. v. the Republic of Moldova [GC]) գործով 2022 թվականի ապրիլի 5-ի վճիռը, դիմում no. 28470/12, § 178

[6] Տես, օրինակ, Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի (Feldek v. Slovakia) գործով 2001 թվականի հուլիսի 12-ի վճիռը, դիմում no. 29032/95, § 83

[7] Տես, օրինակ, Լոմբարդոն և այլոք ընդդեմ Մալտայի (Lombardo and Others v. Malta) գործով 2007 թվականի ապրիլի 24-ի վճիռը, դիմում no. 7333/06, § 55

[8] Վիլլեմն ընդդեմ Ֆրանսիայի (Willem v. France) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռ, դիմում no. 10883/05, § 33

[9] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 46, Էրբականն ընդդեմ Թուրքիայի (Erbakan v. Turkey) գործով 2006 թվականի հուլիսի 6-ի վճիռը, դիմում no. 59405/00, § 55

հարցերով **քաղաքական բանավեճի մասնակցելիս անձինք պետք է չանցնեն այլոց իրավունքների նկատմամբ հարգանքի որոշակի սահմանները:** Միաժամանակ, նման դեպքերում **թույլատրելի է չափազանցության կամ անգամ սադրանքի որոշակի աստիճանը, այսինքն՝ իր արտահայտություններում անձը կարող է որոշ չափով անզսպություն դրսևորել:**[10]

Եվրոպական դատարանը նաև բազմիցս նշել է, որ ժողովրդի ընտրած ներկայացուցիչների, քաղաքական կուսակցությունների և նրանց ակտիվ անդամների արտահայտման ազատությունը հատկապես կարևոր է:[11]

Այս առումով հարկ է նկատել, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և ՀՀ օրենսդրության վերլուծության հիման վրա Հանձնաժողովը 2025 թվականի օգոստոսի 13-ի թիվ 07/2025/Վ/Վ եզրակացությամբ Ազգային ժողովում ՀՀ վարչապետի կարծիքի արտահայտման ազատության առնչությամբ արձանագրել է, որ խորհրդարանը քաղաքական բանավեճի առանցքային ամբիոնն է, ինչպես նաև նշել է հետևյալը.

« (…) վարչապետն անուղղակի կերպով ընտրվում է խորհրդարանական ընտրությունների շրջանակներում, ուստի ՀՀ վարչապետը, հաշվի առնելով նաև, որ նա քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ է, պետք է օգտվի արտահայտման ազատության հատկապես լայն սահմաններից, որոնք, այնուամենայնիվ, չեն կարող նույնանալ պատգամավորական խոսքի արտահայտման ազատության առավել լայն շրջանակների հետ՝ նկատի ունենալով ժողովրդավարական հասարակությունում խորհրդարանական խոսքի առանձնահատուկ կարևորությունը:»:

Բացի այդ, հարկ է նկատել, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ **ազատ ընտրությունները և արտահայտման ազատությունը, հատկապես՝ քաղաքական բանավեճի ազատությունը, միասին կազմում են ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնասյունը:** Եվրոպական

---

[10] Տես, օրինակ, Վիլլեմն ընդդեմ Ֆրանսիայի (Willem v. France) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, դիմում no. 10883/05, § 33

[11] Տես, օրինակ, Սանչեզն ընդդեմ Ֆրանսիայի (ՄՊ) (Sanchez v. France [GC]) գործով 2023 թվականի մայիսի 15-ի վճիռը, դիմում no. 45581/15, § 147

դատարանը նշել է, որ այս երկու իրավունքները փոխկապակցված են և փոխադարձաբար ամրապնդում են միմյանց. **արտահայտման ազատությունը այն նախապայմաններից մեկն է, որն անհրաժեշտ է օրինաստեղծ մարմնի ընտրության շրջանակներում ընտրողների ազատ կամքի արտահայտման համար:** Այս պատճառով է, որ **ընտրություններին նախորդող շրջանում հատկապես կարևոր է, որ բոլոր տեսակի կարծիքներն ու տեղեկատվությունն ազատ շրջանառվեն**[12]**:** Եվրոպական դատարանը նաև ընդգծել է, որ **ընտրական բանավեճերի տեսանկյունից հատկապես կարևոր նշանակություն ունի թեկնածուների կողմից արտահայտման ազատության իրավունքի անխոչընդոտ իրացումը:** Եվրոպական դատարանը նաև արձանագրել է, որ նախընտրական քարոզչությանը բնորոշ է ընդհանրացման և չափազանցությունների որոշակի աստիճանը:[13]

Հանձնաժողովն արձանագրում է, որ նախընտրական շրջանում Կանոնագրքով նախատեսված վարքագծի կանոնների մեկնաբանության նկատմամբ ևս պետք է կիրառելի լինեն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով ամրագրված վերոգրյալ չափանիշները: Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ նախընտրական շրջանում ընտրություններին մասնակցող կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի անդամ հանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի խոսքը Կանոնագրքի տեսանկյունից կարող է ոչ իրավաչափ համարվել միայն բացառիկ դեպքերում՝ երաշխավորելու համար նախընտրական շրջանում տարատեսակ կարծիքների ազատ արտահայտումն ու շրջանառությունը, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձ չհանդիսացող քաղաքական գործիչների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ նախընտրական շրջանում հնարավորինս միատեսակ կանոնների կիրառելիությունը:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ խոսքային վարքագծի առնչությամբ նախընտրական շրջանում Կանոնագրքի 36-րդ և 37-րդ կանոնների առերևույթ խախտում կարող է արձանագրվել միայն այն դեպքում, երբ հանրային

---

[12] Տես, օրինակ, Օրլովսկայա Իսկրան ընդդեմ Ռուսաստանի (Orlovskaya Iskra v. Russia) գործով 2017 թվականի փետրվարի 21-ի վճիռը, դիմում no. 42911/08, § 110

[13] Տես Կուդեշկինան ընդդեմ Ռուսաստանի (Kudeshkina v. Russia) գործով 2009 թվականի փետրվարի 26-ի վճիռը, դիմում no. 29492/05, §§ 87, 95

պաշտոն զբաղեցնող անձը կատարել է այնպիսի արտահայտություններ, որոնք ողջամտորեն կարող են հանգեցնել հանրային իշխանության հեղինակազրկման: Հանձնաժողովը, մասնավորապես, գտնում է, որ նման խոսքի դրսևորումներ կարող են համարվել գռեհկաբանությունները, հայհոյախոսությունները, բռնության կոչ, սպառնալիք կամ արդարացում պարունակող խոսքը, ինչպես նաև ազգության, ռասայի, կրոնական պատկանելիության, սեռի, տարիքի, առողջության և այլ անձնական կամ սոցիալական բնույթի հատկանիշի հիմքով ատելություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրող խոսքը:

Վերոգրյալի համատեքստում քննարկելով դիմումներով ներայացված՝ Ն.Փաշինյանի վարքագիծը՝ Հանձնաժողովը նախ անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Ն.Փաշինյանի ելույթը կատարվել է Ազգային ժողովում ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի տարեկան կատարողականը ներկայացնելու շրջանակներում, միաժամանակ, այն զգալիորեն վերաբերել է Ազգային ժողովի՝ 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցություններին դաշինքներին:

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին **հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով** գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները: Նույն հոդվածի նույն մասի համաձայն՝ **նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:**

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ նախընտրական շրջանը Կանոնագրքի մեկնաբանման իմաստով չի սահմանափակվում «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված՝ **նախընտրական քարոզչության ժամանակահատվածով,** քանի որ օրենսգրքով նշված

ժամանակահատվածի նախատեսման նպատակը ոչ թե նշված շրջանով քարոզչության սահմանափակումն է, այլ ընտրություններին անմիջապես նախորդող որոշակի ժամանակահատվածում տարբեր թեկնածուների և կուսակցությունների միջև հավասար հնարավորությունների (ռեսուրսների) և քարոզչության ֆինանսական թափանցիկության ապահովումը:

Ըստ այդմ, Կանոնագրքի մեկնաբանման նպատակով «նախընտրական շրջանի» մեկնարկը յուրաքանչյուր դեպքում պետք է որոշվի առանձին՝ կախված ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և թեկնածուների կողմից ակտիվ քարոզչական գործունեության իրականացման մեկնարկից: Հանձնաժողովի ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ 2026 թվականի ապրիլի 17-ի դրությամբ քաղաքական կուսակցություններն արդեն իսկ քարոզչական նպատակներով կազմակերպել են միջոցառումներ, հրապարակել քաղաքական գովազդ և այլ կերպով իրականացրել նախընտրական քարոզչություն: Ընդ որում, 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք՝ Ազգային ժողովի հերթական ընտրությունը Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից նշանակվել է դեռևս 2026 թվականի փետրվարի 6-ին՝ թիվ ՆՀ-21-Ն հրամանագրով:

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ դիմումներով և Հրապարակմամբ նկարագրված՝ Ն.Փաշինյանի վարքագիծը կատարվել է նախընտրական շրջանում և դրա նկատմամբ պետք է կիրառվեն նախընտրական շրջանում կարծիքի արտահայտման ազատության լայն սահմանները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Ն.Փաշինյանն իր խոսքում անդրադարձել է խորհրդարանական ընտրություններին մասնակցող երեք ուժերի և քննադատել դրանց՝ նշելով, որ Ազգային ժողովում այդ օրվա քննարկումներն իրեն ցույց տվին, որ խորհրդարանական ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած երեք ուժերը նույնանում են նախկինում իշխանությունը կազմած ուժերի հետ («էդ պատերազմի եռագլուխ կուսակցությունն իրականում ճշգրիտ նույնն ա նախկինների եռագլուխ կուսակցությանը»): Դրանից ելնելով՝ Ն.Փաշինյանը նշված քաղաքական ուժերից մեկին ուղղված քննադատությունները տարածել է նաև մյուսների նկատմամբ և արձանագրել, որ 2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունները

նշված ուժերի վերջին շանսն են, ուստի, ըստ Ն.Փաշինյանի, նշված ուժերը պետք է խորհրդարանական ընտրությունների արդյունքում չհավաքեն այնքան ձայներ, որ անցնեն խորհրդարան: Հանձնաժողովն ընդգծում է, որ այս համատեքստում են Ն.Փաշինյանի կողմից գործածվում «շուն ու շանգյալ» և «բոշա» բառերը՝ նշելով, որ նշված քաղաքական ուժերը ժողովրդին անվանում են «ժեխ, շուն ու շանգյալ, բոշա» և եզրակացնում է, որ այդպիսով նրանք «մարտահրավեր են նետում, որ իրանց ձայն տվող մարդը պիտի ինքն իրան հայատարարագրի՝ որպես ժեխ, շուն ու շանգյալ, բոշա»:

Հանձնաժողովը գտնում է, որ Ն.Փաշինյանն իր նշված խոսքերով հղում է կատարում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի հրապարակած տեսանյութով ներկայացված՝ հեռախոսային խոսակցությունների ձայնագրություններին, որոնցում, ըստ տեսանյութի, «Ուժեղ Հայաստան» կուսակցության ենթադրյալ անդամը կամ աջակիցը հիշատակում է նշված կուսակցության այլ ենթադրյալ աջակիցների միջև խոսակցությունը, որի շրջանակներում նրանցից մեկը մյուսին հանդիմանել է՝ նշելով, որ ինչքան շուն-շանգյալ կա, բերել է, գրանցել շտաբի վրա, իսկ մեկ այլ խոսակցության շրջանակներում զրուցակիցը երկու անձի կոչում է բոշա: Նշվածը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ նույն օրը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում կատարված հրապարակմամբ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը ուղղակիորեն մատնանշում է, որ «քննչական մարմինների կատարած քննության արդյունքում պարզվեց և հրապարակվեց», որ այդ ուժերն իրենց կողմնակիցներին անվանում են շուն ու շանգյալ և բոշա, ինչից Ն.Փաշինյանը եզրակացնում է, որ ինքը նման պայմաններում չի կարող հավատալ, որ Հայաստանի Հանրապետությունում կան քաղաքացիներ, որոնք պատրաստ են ընդունել այդ անվանարկումը և ձայն տալ այդ կուսակցություններին:

Հանձնաժողովն արձանագրում է, որ իր ելույթում նշված քաղաքական ուժերին քննադատելով՝ Ն.Փաշինյանը նաև նշում է, որ նշված ուժերին պետք է, որ քաղաքացիները լինեն աղքատ և անկիրթ («*Դուք շանս ունեք էն հասարակության մեջ, որտեղ կարողանում եք երեխեքին ցեխերի մեջ պահեք, էն հասարակության մեջ, որտեղ երեխեքը շալվար չունեն և շալվար ունենալու շանս չունեն: Էս ա ձեր կառուցած և ձեր երազած հանրությունը:»):* Հանձնաժողովի գնահատմամբ՝ նշված

արտահայտությունների գործածմամբ Ն.Փաշինյանը կրկին հղում է կատարում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի հրապարակած տեսանյութում ներկայացված հեռախոսային խոսակցություններից մեկի ձայնագրությանը, որում զրուցակիցներից մեկը նշում է, որ «երեխեքի վրա» գոռացել են սպորտային հագուստով ներկայանալու համար և նշում է, որ դրա պատճառն այն է, որ փող չունեն, այնուհետև հավելում է, որ նշված «երեխեքի» տաբատները գնել է մեկ այլ մարդ:

Հանձնաժողովը, ըստ այդմ, արձանագրում է, որ Ն.Փաշինյանի վերոնշյալ խոսքի հիմնական նպատակը եղել է նշված քաղաքական ուժերին և նրանց քաղաքականությունը քննադատելը և դրա համատեքստում նրանց օգտին չքվեարկելու հիմնավորումներ ներկայացնելը:

Անդրադառնալով կիրառված արտահայտությունների բովանդակությանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում (Հրաչյա Աճառյանի Անվան Լեզվի Ինստիտուտ: ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա, Երեւան, 2007, հ. 4, էջ 291) «շուն շնագայլ/շանգյալ/շենգել» արտահայտությունը բացատրվում է «1. շատ շատերը, մեծ բազմություն, 2. ով ասես, արժան, անարժան, օտար՝ անարժան (մարդիկ)»: «Շուն ու գել/շուն ու գայլ» ժողովրդական արտահայտությունը Էդ. Աղայանը բացատրում է «անհայտ՝ օտար և անարժան մարդիկ» (Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976, էջ 1125), «շուն ու գայլ» նշանակում է 1. թշնամի, 2. անարժան (Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Աշոտ Սուքիասյան, Երեւանի Պետական Համալսարան, Երեւան, 2009, էջ 868):

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն ընդգծում է, որ «շուն ու շանգյալ» արտահայտությունը «օտար կամ անարժան մարդկանց, անկարգ բազմության, հաճախ նաև՝ վստահություն չներշնչող կամ թշնամանք առաջացնող» մարդկանց խմբի համար ընդհանրացնող ձևակերպում է: Արտահայտությունը օգտագործվում է բացասական գնահատական տալու՝ որոշակի արհամարհանք, անվստահություն կամ հեռավորություն արտահայտելու համար:

Ինչ վերաբերում է «բոշա» բառին, այն նշանակում է՝ 1. գնչու, 2. փոխաբերական իմաստով՝ մուրացկան, 3. փոխաբերական իմաստով՝ պնդերես (Արդի հայերենի

բացատրական բառարան Էդուարդ Աղայան, «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976, էջ 200, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հրաչյա Աճառյանի Անվան Լեզվի Ինստիտուտ, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երեւան, 1969, էջ 337)

Վերոգրյալի իմաստներից բխում է, որ «բոշա» բառը բացի էթնիկ խմբի անվանումից, փոխաբերական իմաստով երբեմն օգտագործվում է բացասական կամ արհամարհական երանգով՝ մատնանշելու մուրացկանություն անող կամ անամոթ, կպչուն մարդկանց:

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ քննադատական խոսքի շրջանակներում Ն.Փաշինյանը գործածել է նաև առերևույթ վիրավորական բնույթի արտահայտություններ: Հանձնաժողովը գտնում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, այդ թվում՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից առերևույթ վիրավորական արտահայտությունների գործածումը մտահոգիչ է:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը կրկին ընդգծում է, որ նախընտրական շրջանում կարծիքի արտահայտման ազատության սահմանները, հատկապես՝ ընտրություններին մասնակցող թեկնածուի կամ կուսակցության անդամի կարծիքի արտահայտման ազատության սահմանները, հատկապես լայն են, և Կանոնագրքի առերևույթ խախտման առկայություն կարող է արձանագրվել միայն բացառիկ դեպքերում: Այլ խոսքերով, վարքագիծը, որն այլ պայմաններում կարող է դիտարկվել որպես Կանոնագրքի դրույթներին ոչ համապատասխան, նախընտրական շրջանում կարող է իրավաչափ դիտվել:

Հանձնաժողովն արձանագրում է, որ քաղաքական բանավեճի շրջանակներում, առավել ևս՝ նախընտրական շրջանում հնչեցվող խոսքին հատուկ է չափազանցությունների, ընդհանրական դատողությունների, անգամ ցնցող, ապշեցնող արտահայտությունների կիրառումը: Հանձնաժողովը կարևորում է այն հանգամանքը, որ Ն.Փաշինյանի խոսքի առաջնային նպատակը եղել է քաղաքական հակառակորդներին քննադատելը, իսկ կիրառված առերևույթ վիրավորական բնույթի արտահայտություններով ՀՀ վարչապետը հղում է կատարել «Ուժեղ Հայաստան» կուսակցության ենթադրյալ աջակցի կողմից կատարված արտահայտություններին՝

կիրառելով նույն բառերը: Ընդ որում, կիրառված արտահայտությունները, չնայած առերևույթ վիրավորական բնույթին, չեն հատել գռեհկաբանություն կամ հայհոյախոսություն լինելու սահմանը: Նմանապես, Ն.Փաշինյանի խոսքը չի պարունակել բռնության կոչ, քարոզչություն կամ սպառնալիք կամ ատելության, թշնամանքի հրահրում:

Վերոգրյալից ելնելով և առաջնորդվելով նախընտրական շրջանում տարաբնույթ կարծիք արտահայտումը և շրջանառումը երաշխավորելու անհրաժեշտությամբ, որը հիմնաքարային նշանակություն ունի ժողովրդավարական հասարակությունում՝ Հանձնաժողովը եզրահանգում է, որ Ն.Փաշինյանի խոսքը չի հատել իրավաչափության սահմանը, այն է՝ չի պարունակում Կանոնագրքի 36-37-րդ կետերի առերևույթ խախտման հատկանիշներ՝ նկատի ունենալով, որ այն կատարվել է նախընտրական շրջանում՝ ընտրություններին մասնակցող կուսակցության անդամի (վարչության նախագահի) կողմից, վերաբերել է առաջիկա ընտրություններին, առաջին հերթին նպատակ է հետապնդել քննադատելու քաղաքական հակառակորդներին, իսկ կիրառված վիրավորական արտահայտությունները հիմնվել են Հակակոռուպցիոն կոմիտեի հրապարակած տեսանյութում ներկայացված ձայնագրությունների վրա, կապակցվել են Ն.Փաշինյանի քննադատությանը և իմաստային առումով լրացրել են այն ու կարևորապես՝ չեն պարունակել հայհոյանք կամ գռեհկաբանություն:

Ինչ վերաբերում է Դիմում 2-ով և Դիմում 3-ով վկայակոչված՝ Կանոնագրքի 61-64-րդ կետերին, որոնք առնչվում են քաղաքական զսպվածության պահպանմանը, Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում Ն.Փաշինյանի վարքագիծը չի պարունակում նաև նշված կանոնների առերևույթ խախտման հատկանիշներ: Այսպես, Կանոնագրքի 61-րդ կետով սահմանվում է այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների՝ քաղաքական չեզոքություն և քաղաքական զսպվածություն դրսևորելու օրենսդրական պարտականությունը հարգելու պահանջ, մինչդեռ Ն.Փաշինյանի խոսքը որևէ կերպ չի անդրադարձել այն պաշտոնատար անձանց վարքագծին՝ քաղաքական զսպվածության կամ չեզոքության համատեքստում:

Կանոնագրքի 62-րդ կետով սահմանվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի պարտականությունը՝ ընտրությունների ժամանակ պահպանելու նախընտրական քարոզչության պահանջները, ինչպես նաև չօգտագործելու հանրային ռեսուրսներն իր, այլ անձանց կամ քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզարշավի համար: Հանձնաժողովն ընդգծում է, որ խորհրդարանը ժողովրդավարական հասարակությունում քաղաքական բանավեճի առաջնային ամբիոնն ու հարթակն է և խորհրդարանական քննարկումների շրջանակներում քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք անխուսափելիորեն կարող են անդրադառնալ նաև համապետական ընտրությունների համատեքստում նշանակություն ունեցող հարցերի: Հանձնաժողովը, ըստ այդմ, գտնում է, որ խորհրդարանում քաղաքական քննարկումների իրականացումը չի կարող համարվել հանրային ռեսուրսի չարաշահում:

Կանոնագրքի 63-րդ կետով նախատեսվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի պարտականությունը՝ իր պաշտոնեական պարտականություններն իրականացնելիս չկատարելու կուսակցական շահը սպասարկելու համար հանրային ռեսուրսները տրամադրելու պահանջները, ինչպես նաև նման պահանջներ չներկայացնելու հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների: Հանձնաժողովն արձանագրում է, որ Ն.Փաշինյանի ելույթը չի պարունակել նման պահանջներ ենթադրող խոսք:

Ինչ վերաբերում է Կանոնագրքի 64-րդ կետին, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ դրանով սահմանվում են անկախ ու ինքնավար մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց պարտականություններ, որոնք չեն կարող կիրառելի լինել քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց, տվյալ դեպքում՝ ՀՀ վարչապետի նկատմամբ:

Հաշվի առնելով նշված փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 27-րդ հոդվածով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Սեմյոն Բաբայանի կողմից 2026 թվականի ապրիլի 18-ին ներկայացված դիմումի, Ավետիք Չալաբյանի կողմից 2026 թվականի ապրիլի 21-ին ներկայացված դիմումի և Ցոլակ Ակոպյանի կողմից 2026 թվականի ապրիլի 22-ին ներկայացված դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Սեմյոն Բաբայանին, Ավետիք Չալաբյանին և Ցոլակ Ակոպյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ